ԵՐԱՉԱՆՔԻ ՃԱՄԲԱՐ

Նպատակ

Օգնել երեխաներին դառնալ ավելի ինքնուրույն, ավելի լավ հասկանալ իրենց իրավունքները, սովորել նաև այլ հմտություններ՝ ինչպես, օրինակ, ցուցաբերել առաջին օգնություն և պատրաստ լինել աղետային իրավիճակներին:

Գործողություններ

Շիրակի մարզի Ամասիա եւ Գյումրի քաղաքների 50 երեխաների հնարավորություն տալ 7-օրյա ճամբարի մասնակցել, որտեղ նրանք իրենց հասակակիցների հետ կմասնակցեն բազմաբնույթ ժամանցային միջոցառումների և ուսումնական դասընթացների:

Ծրագրի նկարագրությունը

World Vision Armenia-ն ՀՀ տարբեր մարզերի, այդ թվում նաև Երևանի երեխաների համար ամեն տարի կազմակերպում է **#DreamCamp** ամառային ճամբարը: Ճամբարի նպատակն է երեխաներին սովորեցնել կյանքի որոշ հմտություններ ու փոխանցել կարեւոր գիտելիքներ, ինչպես օրինակ ցուցաբերել առաջին օգնություն և պատրաստ լինել աղետային իրավիճակներին, ավելին իմանալ իրենց իրավունքների մասին՝ այդ ամենի համար ընկերական միջավայր ապահովելով: Ճամբարի ընթացքում ձեւավորվում են ընկերական նոր հարաբերություններ:

Այո-ն որոշել է համագործակցել World Vision Armenia-ի հետ և իրականացնել Գյումրիի և Ամասիայի 50 երեխաների՝ ամառային ճամբարին մասնակցելու երազանքը: Այս ճամբարը նախատեսված է սոցիալական ծանր պայմաններում ապրող 9-12 տարեկան երեխաների համար, որոնք երազում են մեկ շաբաթ անցկացնել Հանքավանում՝ պրոֆեսիոնալ մասնագետների և մարզիչների հետ, ովքեր եւս ճամբարի շրջանավարտներ են: Երեխաների մեծ մասի համար #DreamCamp-ը հրաշալի հնարավորություն է, որի շնորհիվ նրանք կարող են արձակուրդ անցկացնել իրենց գյուղից դուրս, ծանոթանալ հասակակիցների հետ, կյանքի նոր հմտություններ ձեռք բերել և ավելի լավ ապագայի հնարավորությամբ ոգեշնչվել: #DreamCamp -ի մասնակիցների ⅓ մասը խոցելի սոցիալական պայմաններում ապրող երեխաներ են:

Ըստ World Vision Armenia-ի դիտարկումների՝ ճամբարը դրականորեն է ազդում երեխաների կյանքի վրա՝ օգնելով ձեռք բերել.

- Ինքնավստահություն
- Դիմացկունություն ճգնաժամային իրավիճակներում
- Ինքնորոշում
- Հաղորդակցություն տարեկիցներ և մեծահասակների հետ
- Հոգատարության զգացողություն ընկերների և համայնքի նկատմամբ
- Իրավունքների իմացություն
- Կոնֆլիկտների լուծման հմտություններ

Միասին մենք կարող ենք ընձեռել այս հնարավորությունը Շիրակի երեխաներին՝ նվիրելով ուրախ և զարգացնող մանկական փորձառություն: Ասա՛ Այո Երազանքի Ճամբարին և նպաստի՛ր երեխաների զարգացմանը:

Բյուջե

ԻՆՉ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕՐԵՐԻ ՔԱՆԱԿԸ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԹԻՎԸ	1 ԵՐԵԽԱՅԻ ԳՈՒՄԱՐ ՀՀ ԴՐԱՄ	1 ԵՐԵԽԱՅԻ ԳՈՒՄԱՐ ԱՄՆ ԴՈԼԱՐ	ԸՆԴԱՄԵՆԸ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴԱՄԵՆԸ ԱՄՆ ԴՈԼԱՐ
Ճամբար	7	50	4 000	$8.3	1 400 000	$2 905

Փոխարժեք 1 ԱՄՆ դոլար = 481.92 ՀՀ դրամ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ **$2,905**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԱՔՎԱԾ ԳՈՒՄԱՐ **$10,631.41**